

չորքեան» (126): Որովհետեւ այդ դարուն սովորական էր եւ չափահաս մկրտուիլ, ծննդեան հանդէսը մկրտութենէն հետի եւ առանձին կը կատարուէր: Բայց միջին դարուն, ուր արդէն հաստատուն էր ութօրեայ մուտն յաւազան, այս առթիւ կը կատարուէր հին հանդէսը, զոր Ալաւկայ որդին հարսանեաց յար եւ նման կը նկարագրէ՝ ըսելով. «Յաւուր շաւառորոքեան զմանկունս, նոյնպէս ի տան հարսանեաց... մի՛ ոք իշխեսցէ կարաւել կամ պարել ըստ ազգի ազգի հեթանոսական խաղուց» (ԻԳ): Այս տեղ յիշուած պարագայը արդարեւ մասն են կոչնոց (հմմտ. աստ, 211), զոր Յովհ. Եզնկացին յայտնապէս ալ կ'աւանդէ հետագայ բացատրութեամբ. «Մի՛ զմկրտութիւնն որպէս մարմնական գործ համարիր, եւ ծիծաղելով եւ արբեցորեամբ առնէք» (Խրտ. Գ). եւ արբեցութիւնը գիտենք որ խնճոյից մէկ պատկերն էր:

Յ. — Բարեկեդան: — Մնացորդ է հին ազգերու սովորութեան, որոնք յատուկ օրեր ունէին աստուածոց նուիրուած, եւ անոնց մէջ ամէն տեսակ զեղխութիւն կը գործէին համարձակ եւ անարգել: Այսպէս էին Հռովմայ սատուռեակներ եւ Յունաց դիոնիսակներ (Դար. Գ, 1080. Բ, 230), որոց երկրորդին թարգմանիչ ու հոմանիշ